

## ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի

### հարցազրույցը «Պատվամենտ» հասարակական-քաղաքական ամսագրին

- Պարոն Խաչատրյան, այսուհետ աշխարհի ամենաերկար ճուպանոդու անվտանգ թռիչքն ապահովելու է Սյունյաց աշխարհը: Այս հարցում, Դուք, ղեկավարելով արդեն ոչ միայն Հայաստանի, այլև՝ աշխարհի կարևոր տարածաշրջանը, որն արդեն տուրիզմի զարգացման կարևորագույն կենտրոններից է, աշխարհին ներկայանալու համար ի՞նչ սկզբունքներ եք որդեգրել:

Սյունյաց երկիրն աշխարհին ներկայացնելու մեր սկզբունքները վաղուց որդեգրված են և նաև դրա շնորհիվ է, որ այսօր բոլորիս աչքի առջև Սյունիքն աստիճանաբար զարգանում ու շենանում է:

Զբոսաշրջության ոլորտին վերաբերող մեր անելիքները և դրանց համատեքստում նաև աշխարհին ներկայանալու մեր սկզբունքները մշակված են Սյունիքի մարզպետարանում՝ դեռևս 2004 թվականին՝ որպես Սյունիքի մարզպետ իմ պաշտոնավարման հենց առաջին տարվա ընթացքում: Դրանք վերջնական տեսքի բերվեցին և ընդգրկվեցին 2009 թվականին մարզպետարանում մշակված ու ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի 782-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում (ծրագրին ամբողջությամբ կարող եք ծանոթանալ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայքից, Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգից):

Տաթևի ճուպանոդու կառուցումը հսկայական ներդրում է Սյունիքի զարգացման գործում և արդեն իսկ մեծ խթան է հանդիսանում այստեղ զբոսաշրջությունը զարգացնելու համար: Նաև կարծում եմ՝ պատահական չէ, որ այսպիսի չափանիշներով ճուպանոդին առաջին հերթին հենց կառուցվեց Սյունիքի մարզում, քանի որ մարզն ունի զբոսաշրջային զգալի ներուժ, որը ներկայացված է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով: Ճուպանոդին եկավ բազմապատկելու այս զբոսաշրջային ներուժը և, ինչպես տեսնում եք, կառուցվեց հենց մարզի զբոսաշրջության զարգացման համար նշանակալի և գլխավոր դեր խաղացող Տաթևի վանական համալիրի հարևանությամբ:

Ճուպանոդու կառուցումը լայն հնարավորություններ տվեց մեզ տնտեսությունը զարգացնելու համար և այժմ մենք պիտի կարողանանք օպտիմալ կերպով օգտվել այդ հնարավորությունից:

Մարզի զարգացման ծրագրում մենք նշել ենք Սյունիքում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագիր ունենալու անհրաժեշտությունը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Զբոսաշրջության զարգացման գործընթացում մենք ձգտելու ենք նպաստել մասնավոր հատվածի՝ մեծ ներուժով հանդես գալուն, ենթակառուցվածքների ներդաշնակ զարգացմանը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգմանը, վերակառուցմանը, կառուցմանը, մարզում առկա մշակութային ժառանգության՝ պատմամշակութային հուշարձանների գույքագրմանը, Տաթևի համալիրի վերանորոգման և մարզի մյուս համալիրների վերանորոգման ավարտմանը, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող

ավտոճանապարհների վերանորոգմանը, մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանմանը, նախկինում գործող օդանավակայանների վերագործարկմանը, փոքր ավիացիայի օգտագործմանը, ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով Սյունիքի մարզի որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրամասի նկարագրի ձևավորմանը և միջազգային շուկայում ներկայացմանն ու ամրապնդմանը, Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում Սյունիքի զբոսաշրջային գրավչության բարձրացմանը, մեր հայրենակիցների համար բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծմանը և պահպանմանը:

Ահա այն հիմնական ուղղությունները, որոնք մենք պետք է ի նկատի ունենանք առաջիկայում:

**- 2010 թվականը Սյունիքի մարզի համար ինչպի՞սին էր, մարզում ի՞նչ հաջողություններ ու նվաճումներ գրանցվեցին:**

2010 թվականը Սյունիքի մարզի համար որակում եմ որպես հաջող տարի: Ինչպես միշտ, այնպես էլ այս տարվա ընթացքում, նույնպես, Սյունիքի հիմնախնդիրների լուծման գործընթացը շարունակեց մնալ Հանրապետության Նախագահի և կառավարության տեսադաշտում: Բավական է նշել, որ 2010 թվականի ընթացքում, մի շարք անգամ Հանրապետության Նախագահը, վարչապետը, կառավարության անդամներ այցելեցին Սյունիք, տեղում ծանոթացան հիմնախնդիրներին, գործընթացներին, բացման արարողություններին:

Մարզպետարանի աշխատակազմում տարվա արդյունքներն արդեն ամփոփվում են և շուտով ես հաշվետվություն կներկայացնեմ ՀՀ կառավարությանը 2010 թվականին իմ գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ: Ուղղակի կարող եմ նշել մի քանի կարևորագույն իրադարձություններ և թվեր, որոնք շատ բան կասեն տարին Սյունիքի մարզի համար հաջող որակելու գնահատականի օգտին:

Ինչպես արդեն նշեցիք, 2010 թվականի հոկտեմբերի 16-ին բացվեց Տաթևի ձուլանուղին, որը հսկայական խթան է տնտեսությունը զարգացնելու գործում:

Գործիսում բացվեց վերակառուցված բժշկական կենտրոն, որի շինարարական աշխատանքների համար կատարվել է շուրջ 867, 6 հազար դրամի ներդրում, ընդհանուր ներդրումները կազմել են շուրջ 1 միլիարդ դրամ: Հիվանդանոցում ներկայումս աշխատում է 76 բժիշկ, 162 միջին և 29 կրտսեր բուժաշխատող: Մահճակալների ընդհանուր թիվը 110 է:

Դեկտեմբերի 1-ին հանդիսավորությամբ բացվեց Կապանի տարածաշրջանի Հանքասարի պղնձամոլիբդենային հանքավայրի կենտրոնական տեղամասի շահագործման համալիրը, որն իրականացնում է «Լեռ-Էքս» ՍՊԸ-ը: Միաժամանակ իրականացվում է հանքաքարի վերամշակման ֆլոտացիոն ֆաբրիկայի կառուցումը՝ համապատասխան թափոնամբարով ու մաքրված ջրի հետադարձ օգտագործման եղանակի կիրառմամբ: Նախատեսված է տարեկան 150 հազար տոննա հանքաքար արդյունահանել, իսկ առաջիկա տարիներին՝ ձեռնարկության արտադրական հզորությունը հասցնել 450 հազ. տոննայի: Նորաբաց ձեռնարկությունը կհամագործակցի մարզի մյուս հանքարդյունաբերական ձեռնարկությունների հետ: Հանքավայրի շահագործումն առաջին հերթին լուրջ ռազմավարական նշանակություն ունի, քանի որ այն գտնվում է սահմանամերձ գոտում: Բացի դրանից, համալիրի շահագործմամբ բացվել են աշխատատեղեր, ինչը կնպաստի մարզում գործազրկության մակարդակի իջեցմանը:

Ներկայումս Հանքասարում աշխատում է 300 մարդ, հետագայում նրանց թիվը նախատեսված է հասցնել 450-ի:

Դեկտեմբերի 17-ին Հայ-կանադական առևտրաարդյունաբերական պալատի ու Կանադայի տեղեկատվայնացման միջազգային ակադեմիայի հետ ստորագրվեց համագործակցության վերաբերյալ պայմանագիր: Համագործակցությունն ուղղված է լինելու Սյունիքի մարզի զարգացմանը, մի շարք՝ կրթության, առողջապահության, զբոսաշրջության, լեռնահանքային ու վերամշակման ոլորտներում ծրագրերի իրականացմանը:

Ըստ ստորագրված փաստաթղթի՝ պալատն աշխատանքներ է իրականացնելու ներդրումների ներգրավման, միջազգային ծրագրերի ֆինանսավորման կազմակերպման, Հայաստանում նախագծերի իրագործմանը կանադական առաջատար ընկերությունների եւ կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:

Կանադայի տեղեկատվայնացման միջազգային ակադեմիան նախատեսում է Հայաստանում գտնվող իր մասնաճյուղի միջոցով Սյունիքի մարզում ստեղծել լեռնահանքային եւ լեռնավերամշակման, կառավարման բնագավառների մասնագետների պատրաստման ու վերապատրաստման ուսումնական կենտրոն:

Շվեցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ, «Շեն» ԲՀԿ-ի միջոցով հաստատվել և իրականացվել է Մեդրիի շրջանի գյուղական զարգացման ծրագիրը շուրջ 1.8 մլն շվեցարական ֆրանկ ընդհանուր գումարով: Ծրագրի մեկնարկը տրվել է 2010թ. հոկտեմբերի 1-ից:

Հայաստանի հետ Գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում Գերմանական KFW բանկի, ՀՀ բնապահպանության նախարարության հետ կնքված համաձայնագրի համաձայն սկսվել է Շիկահողի կենսոլորտային արգելոցի և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը 6.0 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով: Ծրագրի մեկնարկը տրվել է 2010 հոկտեմբերի 11-ին:

2010թ. հոկտեմբեր ամսին ստորագրվեց համաձայնագիր ՇՉՀԳ-ի հետ Գորիս քաղաքում 22 բնակարանանոց նոր շենքի կառուցման համար: Շենքի շինարարության սկիզբը դրվել է 2010թ. դեկտեմբերի 20-ից:

<Լավագույն տնօրեն>, <Լավագույն ուսուցիչ>, <Լավագույն դաստիարակ> հանրապետական մրցույթում սյունեցի երեք մանկավարժներ հաղթող ճանաչվեցին նվաճելով առաջին պատվավոր տեղերը: Հոկտեմբերի 5-ին՝ <Ուսուցչի օրվա> կապակցությամբ ՀՀ վարչապետի կողմից երկու մանկավարժներ պարգրատրվեցին <Շնորհետ> մակնիշի ավտոմեքենաներով և իսկ մեկը՝ Ժամանակակից համակարգչով:

2010 թ հոկտեմբերին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ Գորիս քաղաքում մեծ շուքով նշվեց քաղաքի հիմնադրման 140 ամյակը: Տոնի կապակցությամբ Գրիգոր Տաթևացու հրապարակում բացվեց Տաթևացու հուշարձանը, իսկ Մխիթար Սպարապետի հրապարակում գործարկվեց երգող շատրվանը: Հուշարձանի հեղինակն է երիտասարդ քանդակագործ Նարեկ Օրդյանը:

Քաղաքաշինության, տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում 2010 թվականի ընթացքում մարզում իրականացվել են շուրջ 9 մլրդ. 950 մլն. դրամի համաշինարարական աշխատանքներ, որից՝ 2 մլրդ. 640 մլն. դրամի կապիտալ շինարարության և 7 մլրդ. 310 մլն. դրամի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներ: Միայն ճանապարհաշինարարության բնագավառում կատարվել է ավելի քան 7,0 մլրդ դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանք:

2009 թվականի համեմատությամբ մարզում իրականացված համաշինարարական աշխատանքների ծավալը աճել է 6 տոկոսով: Հատկանշական է, որ 2010 թվականին

աշխատանքների ընդհանուր ծավալի մեջ աճել է կապիտալ շինարարության ծավալը: Եթե 2009 թվականին այն կազմել է 10,9% կամ 1 մլրդ. 22 մլն. դրամ, ապա 2010 թվականին այն հասցվել է 26,5%-ի կամ 2 մլրդ. 640 մլն. դրամի:

Ընթացիկ տարում վերանորոգել է մարզպետարանի վարչական շենքը: Ամբողջությամբ վերանորոգվել է շենքի դիմային պատը, ինչպես նաև շենքի սենյակների մի մասը:

Միջազգային կազմակերպությունների կողմից 2010 թվականի ընթացքում մարզում կատարած ներդրումների ծավալի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվում է: Նախնական տվյալներով այն կազմում է 15 մլրդ դրամից ավելի:

**- Խաչատրյանների ընտանիքը Նոր տարին դիմավորելու որևէ՞ հետաքրքիր ավանդույթ ունի: Առհասարակ ինչպե՞ս եք դիմավորում Նոր տարին:**

Մեր ընտանիքը Նոր տարին դիմավորում է այնպես, ինչպես հայ ընտանիքների մեծամասնությունը՝ պատրաստում ենք տոնական սեղան, հյուրեր ենք ընդունում, մենք ենք հյուր գնում: Անցած ժամանակաշրջանում, հիմնականում նոր տարին միշտ էլ դիմավորել ենք տանը՝ Գորիսում հարազատների մասնակցությամբ:

**- Հանգստի Ձեր նախընտրած տարբերակը ո՞րն է:**

Ես ազատ ժամանակ շատ քիչ եմ ունենում: Որոշ չափով հանգստանում եմ միայն արձակուրդների ժամանակ: Եթե հնարավորություն է ստեղծվում՝ նախ կրկին ու կրկին միշտ այցելում եմ այն վայրերը, որտեղ մեր պատմամշակութային հուշարձաններն են ու մեր ժողովրդի ստեղծած մնայուն արժեքները: Միրում եմ նաև ճամփորդել, ծանոթանալ այլ երկրների ու ժողովուրդների մշակույթին, սովորույթներին:

**- Ի՞նչը կարող է Ձեզ նյարդայնացնել:**

Կարծում եմ՝ մեր շուրջը մեզ նյարդայնացնող որոշակի երևույթներ միշտ էլ կգտնվեն, սակայն կարևորն այն է, որ խոհեմ լինենք և դրանց վերաբերվենք սթափ և հավասարակշռված դատողությամբ:

**- Մարդու մեջ գնահատելի արժեքը ո՞րն է:**

Մարդու մեջ գնահատելի արժեքներ շատ կան: Կարծում եմ մարդը նախ և առաջ պետք է հայրենասեր լինի: Հայրենասիրությունը, հայրենիքի հանդեպ ունեցած հավիտենական պարտքի զգացումը, սերը դեպի իր հայրենի երկրամասն ու ժողովուրդը մարդու համար պետք է առաջնային լինեն: Եթե այս արժեքային ընկալումը տվյալ մարդու մեջ կա, ապա մարդը կարող է լինել և լավ քաղաքացի, և լավ ծնող, ընկեր կամ բարեկամ:

Մարդու մեջ արժևորում եմ նաև ստանձնած գործի նկատմամբ պատասխանատվության զգացումը:

**- Մարդկային հարաբերություններում ի՞նչն եք կարևորում:**

Մարդկային հարաբերություններում կարևորում եմ փոխադարձ հարգանքը, վստահությունը, փոխըմբռնումը, դիմացիինն մինչև վերջ լսելու, նրա կարծիքը հարգելու կարողությունը: